ռաջ։ Խորամանկ Շահաբբաս կռուի ժամանակ միշտ քրիստոնեաներին, այսինքն Հայերին էր առաջ ձգում եւ ստիպում Նրանց կռիւ տալ. եւ այսպիսով թշնամու գնդակները խեղճ Հայերի գլխին էին տեղում։ Ալլահվերդի խան վէզիրը, որին Շահաբբաս ուղարկել էր Արծկէ քաղաքի վրայ, չկարողանալով այդ ամուր բերդն առնել, մնաւ Բզնունեաց գաւառը, Քաջբերունեաց երկիրը, Արճէշ, Վան, եւ բոլանդակ աշխարհի մէջ սուր եւ հուր սփռեց, որքան կարողացաւ կոտորեց, մանաւանդ ծերերին եւ մանուկներին, եւ մնացածն ի գերութիւն վարեց։ Առաքել Վ.ի վկայութեան համեմատ՝ միայն Բզնունեաց, Առբերանի, Քաջբերունու եւ Տոսպի գաւառներից գերած Հայերի թիւն 23.000 էր, թող կոտորուածները։ Այդ բոլոր գերուած ժողովուրդն իրանց գրաստների, ուշխարների եւ ձիերի հետ Ալլահվերդի խանը բերաւ ածեց Պարսից բանակն եւ Շահաբբաս որոշելով եկաւորներին պանդուխտ բնակիչներից, քշել տուեց առաջիններին Պարսկաստան, իսկ բնիկներին դարձնելով իրանց տեղերը, ծանր հարկեր դրաւ Նրանց վրայ։

Երեւանի պաշարման միջոցին, Սրապիոն կաթուղիկոսն այդտեղ էր։ Էջմիածնի աթոռի պարտատէր Օսմանցիները վախնալով, որ քաղաքն առնուի եւ իրանց պահանջը կորսուի, բռնեցին Սրապիոնին եւ շարչարելով պահանջում էին Մելքիսէթի եւ Դաւթի պարտքերն ասելով, թէ այժմ կաթուղիկոսն դու ես։ Խեղճ